ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հասարակագիտություն

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԹԵՍՏԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ուղեցույցում ներկայացվում է ուսուցչի ատեստավորման թեստի կառուցվածքը, տրվում են առաջադրանքների կառուցվածքային տեսակների նկարագրությունը, դրանց նմուշ-օրինակները, պատասխանների գնահատման չափանիշները, առաջադրանք-ներում ընդգրկվող նյութի շրջանակները:

Թեստավորումն անցկացվում է համակարգչային եղանակով, տևողությունը՝ 180 րոպե:

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Թեստը պարունակում է 60 առաջադրանք, որոնցից հնարավոր է վաստակել առավելագույնը 60 միավոր:

Կառուցվածքային առումով առաջադրանքներն ունեն հետևյալ 2 հիմնական տեսակները՝ ընտրովի պատասխանով առաջադրանքներ և կարճ պատասխանով առաջադրանքներ:

- Ընտրովի պատասխանով առաջադրանքների դեպքում տրվում են պատասխանի 4-ական տարբերակներ, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ճիշտ պատասխանի դեպքում առաջադրանքին տրվում է 1 միավոր:

- Կարճ պատասխանով առաջադրանքները հետևյալ տեսակների են.
  *համապատասխանեցման
  *ըստ առաջադրանքի պահանջի բոլոր ճիշտ կամ սխալ պատասխանների ընտրությամբ առաջադրանքներ: Այդ առաջադրանքներում տրվում են 7 պնդումներ, շարքեր և այլն, որոնցից պահանջին համապատասխանում են մի քանիսը: **Ճիշտ պատասխանների քանակը հարցադրման մեջ չի նշվում**: Առաջադրանքին տրվում է 1 միավոր, եթե ճիշտ են նշված պահանջին համախատասխանող բոլոր միավորները:

  Կարճ պատասխանով առաջադրանքներին պատասխանելիս անհրաժեշտ է նշել առաջադրանքի պահանջին բավարարող ճիշտ և լիարժեք պատասխանը: Սխալ,

թերի կամ ոչ ամբողջական պատասխանի դեպքում միավոր չի տրվում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

Տեսակ	Քանակ	Միավոր
Ընտրովի պատասխանով	45	45
Կարճ պատասխանով	15	15
Ընդամենը	60	60

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՆՄՈՒՇ-ՕՐԻՆԱԿՆԵՐ

Ընտրովի պատասխանով

Լրատվական կրթության հետևյալ ուղղություններից ո՞րը չի համարվում վերջին տասնամյակներում ձեռք բերված հիմնական ուղղություն: (1 միավոր)

1) պատվաստման

2) քննադատական

3) վերլուծական

4) վերծանման

Կարճ պատասխանով

Նմուշ 1. Գեղեցիկի մասին պնդումներից որո՞նք են ***սխալ*** : Նշել դրանց համարները: (1 միավոր)

1. Ըստ Պյութագորասի գեղեցիկն ունի չորս աստիճան:

2. Հին հույների համար գեղեցկության չափանիշը Աթենասն էր:

3. Վերածննդի դարաշրջանի արվեստագետներից՝ Լեոնարդո դա Վինչին, Շեքսպիրը, գեղեցկության աղբյուր էին համարում բնությունը:

4. Ըստ Սոկրատեսի տիեզերքում հնչում է հրաշալի երաժշտություն, որն ի վիճակի է գեղեցկացնելու այն ընկալելու ունակ մարդուն:

5. Արիստոտելը գեղեցիկ էր համարում այն երևույթները, որոնց բնորոշ էր չափավորվածությունն ու կարգավորվածությունը:

6. Կոկո Շանելն ասել է. «Գեղեցկության մասին հոգալիս պետք է սկսել հոգուց, այլապես ոչ մի շպար չի օգնի»:

7. Գեղագիտական զգացումը այն հուզական վիճակն է, որն առաջանում է իրականության երևույթների կամ արվեստի ստեղծագործությունների գեղագիտական ընկալման գործընթացում:

Նմուշ 2. Համապատասխանեցնել դեդուկցիայի եզրահանգման աստիճանները օրինակներին: (1 միավոր)

1.Թույլ հիմնավորված մտահանգում	ա) Բենզինի գները կտրուկ աճում են, հետևաբար՝ բենզինի սպառումը կտրուկ կնվազի:
2.Չափավոր հիմնավորված մտահանգում	բ) Այսօր կիրակի է, հետևաբար՝ այսօր անձրևելու է:
3.Ուժեղ հիմնավորված մտահանգում	գ) Նա հաճախակի խաբել է ինձ: Հետևաբար՝ նա ազնիվ մարդ չէ:
4.Դեդուկտիվ հիմնավորված մտահանգում	դ) Դու մեկ անգամ ինձ խաբել ես, հետևաբար՝ ես բացարձակապես չեմ

	վստահում քեզ:
	ե) Պաղպաղակը համեղ է, հետևաբար՝ սննդարար է:
	զ) Քաղաքական գործիչը գեղեցիկ արտաքին ունի, հետևաբար՝ լավ քաղաքական գործիչ է:
	է)Բամբակի գները նվազում են, իսկ պահանջարկը մեծանում է, հետևաբար՝ բամբակի վաճառքը կաճի:

1	2	3	4

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ՆՅՈՒԹԸ

Ուսուցիչների ատեստավորման թեստերի կազմման համար որպես հիմք են ընդունվում «Հասարակագիտություն» առարկայի հանրակրթական դպրոցի ծրագրերը, չափորոշիչները և գործող դասագրքերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Կ.Հարությունյան, Ե.Սողոյան, Հ.Բարսեղյան, Ն.Գալստյան, Ա.Մանուչարյան, Տ.Սիմոնյան: Հասարակագիտություն: Դասագիրք հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի համար - «Զանգակ» հրատ.Երևան 2023

2.Կ. Հարությունյան, Տ. Սիմոնյան, Հ.Բարսեղյան Հասարակագիտություն: Դասագիրք 8–րդ դասարանի համար - «Զանգակ» հրատ. Երևան 2024

3. Կ.Հարությունյան, Տ.Սիմոնյան, Ա.Մանուչարյան,Ն.Գալստյան Հասարակագիտություն: Դասագիրք հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի համար - «Զանգակ» հրատ. Երևան 2025

4.Կ .Հարությունյան, Հ .Բարսեղյան, Ն.Գալստյան: Հասարակագիտություն: Դասագիրք 10-րդ դասարանի համար- «Զանգակ» հրատ. Երևան- 2024

5.Ն.Գալստյան, Տ.Սիմոնյան, Ա.Մանուչարյան: Հասարակագիտություն 11-րդ դասարանի համար: «Զանգակ» հրատ. Երևան-2025

6. Ս. Պետրոսյան, Ս.Խաչատրյան: Հասարակագիտություն 12-րդ դասարանի համար, «Տիգրան Մեծ» հրատ., Երևան 2023

Ծանոթություն: Գրականության ցանկում չնշված որևէ այլ աղբյուր չի կարող հիմք ծառայել բովանդակային բողոքարկման համար: